



## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևան

18 դեկտեմբեր 2015թ.

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը և «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կողմեր), կարևորելով Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը երիտասարդության առավել ակտիվ ներգրավումը և ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները, հաշվի առնելով Երկրապահ կամավորականների՝ հայրենիքի պաշտպանության, նրա սահմանների անձեռնմխելիության համար դերակատարությունը, նկատի ունենալով հայրենիքի պաշտպանությանը մասնակցած մարտիկների սոցիալ-տնտեսական խնդիրների աջակցության անհրաժեշտությունը, կարևորելով նրանց մասնակցությունը մարզամշակութային, կրթադաստիարակչական, ռազմահայրենասիրական ծրագրերին՝ կնքեցին համագործակցության հուշագիր հետևյալի մասին.

1. Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և Սփյուռքում մշակել և երիտասարդության շրջանում համատեղ իրականացնել մարզամշակութային, ռազմահայրենասիրական ծրագրեր և ձեռնարկներ:
2. Համատեղ միջոցներ ձեռնարկել հունվարի 28-ին՝ Հայոց բանակի օրվան նվիրված տոնական հանդիսություններ կազմակերպելու հայկական համայնքներում: Հայրենիքի պաշտպանության գործում Երկրապահ կամավորականների ցուցաբերած արիության և խիզախության, նրանց անցած ճամփան ներկայացնելու նպատակով կազմակերպել մեծարման միջոցառումներ Հայաստանում և Սփյուռքում:
3. Նպաստել Հայկական սփյուռքի համայնքային կազմակերպությունների և տեղերում գործող Երկրապահ կամավորականների միության ներկայացուցչությունների

համագործակցությանը, ինչպես նաև երկրապահների կարիքավոր ընտանիքներին օգնություն կազմակերպելու աշխատանքներին:

4. Ապահովել Երկրապահ կամավորականների ընտանիքներում սփյուռքահայ երեխաների հյուրընկալումը և ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ճամբարային ծրագրի օրերին նրանց համապատասխան տարիքի երեխաների հանգստի ու ժամանցի կազմակերպումը: Իրականացնել «Արի տուն» ծրագրի մասնակիցների հանդիպումներ «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության ղեկավարների և ազատամարտիկների հետ:

5. Կազմակերպել և իրականացնել համատեղ մշակութային միջոցառումներ՝ նվիրված արցախյան հերոսամարտի հաղթանակի տարեդարձերին, հերոսամարտի բացառիկ էջերին ու հիշատակի օրերին:

6. Մշակել և իրականացնել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը նվիրված երիտասարդական, մարզական և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ ծրագրեր:

6. Կողմերից որևէ մեկի առաջարկած համագործակցության յուրաքանչյուր ծրագիր, ձեռնարկ քննարկել և իրականացնելուց առաջ ստանալ մյուս կողմի սկզբունքային համաձայնությունը:

7. Սույն համագործակցության հուշագիրը կազմված է երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:

8. Սույն համագործակցության հուշագրում ցանկացած լրացում կամ փոփոխություն կատարվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և ձևակերպվում առանձին արձանագրության տեսքով, որը կազմում է սույն համագործակցության հուշագրի անբաժանելի մասը:

9. Սույն համագործակցության հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՓՅՈՒՌԻ ԼՆԽԱՐԱՐ  
ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒՅԱՆ**



*[Handwritten signature]*  
Երևան,  
0010, Վազգեն Սարգսյան 26/1

**«ԵՐԿՐԱՊԱԿ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ  
ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ ԼՆԽԱԳԱԿ  
ՄԱՆՎԵԼԳՐԻԳՐՈՒՅԱՆ**



*[Handwritten signature]*  
Երևան,  
Արշակունյաց 22